ԿՐՕՆԱԿԱՆ

Տ. ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ՋԱՐԳԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 նոյեմբերի, 2014 թ.)

«Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, եւ աղջիկդ կապրի»
«Աղջի՛կս, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց»
(հմմտ. Ղուկ. Ը 50, 54):

Սիրելի՛ հավատավոր քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Սուրբ Եկեղեցու խորանից, Սուրբ Ավետարանի վերաբերումով, մահվան եւ հարության գողտրիկ մի պատումի այժմեականացմամբ Աստված մեզ զոտեպնդման եւ հավատի ամրապնդման կոչ է անում մարդկային կյանքի մեր տկարություններին հանդիման, ճիշտ նույն խոսքով, որով զոտեպնդել էր դստեր մահվան իրականության առջեւ ցնցված հորը, որով մահվան իրականությունից կյանքի էր վերակոչել տասներկու տարին բոլորած աղջնակին:

Ի՞նչ է պատմում այսօրվա ավետարանը:

Հիսուս աշակերտների հետ բարեհաջող նավարկությամբ Գեննեսարեթ լճի հակառակ ափից վերադառնում էր Կափառնաում՝ իր հաստատուն բնակության վայրը: Ընդամենը մի քանի օր էր անցել նրա մեկնումից, սակայն բացակայությունն արդեն զգալ էր տվել քաղաքի բնակիչներին, որոնք սովորել էին նրա ներկայությանն ու արտասովոր գործունեությանը: Լճի մյուս կողմն անցնելը կասկածի տեղիք էր տվել. մի՞թե հալածանքներից խուսափելու համար որոշել է բնակության վայրը փոխել: Ահա թե ինչու էին անհամբերությամբ սպասում, երբ առավոտյան նշմարել էին ետ դարձող նավակները: Միմյանց ձայնելով՝ հավաքվել էին լճի եզերքին՝ դիմավորելու Հիսուսին, անշուշտ, նոր բժշկությունների ակնկալիքով:

Սպասողներից մեկն էլ Հայրոսն էր՝ Կափառնաումի ժողովարանի ղեկավարներից մեկը, քաղաքում ազդեցիկ մի մարդ: Նա եւս ակնկալիք ուներ. իր տասներկուամյա միանուագար աղջիկը ծանր հիվանդ էր, եւ հակառակ բոլոր ջանքերին՝ վիճակը օրհասական էր: Հազիվ էր Հիսուս նավակից իջել, երբ Հայրոսն ընկնում է նրա ոտքերը՝ թախանձագին ներկայացնելով իր ցա-

վը. «Աղջիկս մահամերձ է, արի ձեռքդ դիր նրա վրա, որպեսզի առողջանա եւ ապրի»: Հիսուս, որ երբեք անտարբեր չէ մարդկային ցավի հանդեպ, մանավանդ երբ մարդը դուրս է գալիս իր ինքնաբավությունից՝ գործելու տեղ բացելով Տիրոջ սիրո զորության առջեւ, հոր խնդրանքին ընդառաջ բռնում է նրա տան ճանապարհը: Ինչպիսի՜ հույս է արթնանում տագնապած հոր սրտում, ինչպիսի՜ լույս է առկայծում դստերը բժշկված տեսնելու հեռանկարում: Բայց իրականությունը հետզհետե առավել դաժան կերպարանք է ստանում: Ճանապարհին հանկարծ Հայրոսին ընդառաջ են գալիս մի քանի ազգականներ եւ հայտնում ցավալի լուրը. «Աղջիկդ մեռավ, էլ ինչո՞ւ ես հոգնեցնում Վարդապետին»:

Ի՜նչ քաղաքավարություն, որի տակ քողարկված էր հավատի եւ հույսի բացակայությունը: Սուրբ Գրքից հայտնի էին հրաշագործությունները Եղիա եւ Եղիսե մարգարեների, որոնք Տիրոջ զորությամբ հարություն էին տվել եւ իրենց մայրերին վերադարձրել երկու պատանիների: Հայրոսի ազգականները, որոնք ժողովարանի միջավայրից էին, պետք է որ հիշեին սուրբգրային այս դրվագները: Նրանք քաջատեղյակ էին, թե ի՜նչ հավատով էր լցված Հայրոսը Հիսուսի հրաշագործ զորության հանդեպ: Բայց ո՜չ, նրանք ընտրում են մարդկային սահմանափակ տրամաբանությունը՝ փորձելով փշրել սիրառատ հոր հույսերը եւ ներքաշել իրենց իրապաշտության մեջ:

Իսկ ո՞րն էր այդ իրապաշտությունը: Մահամերձ աղջկան բժշկելու խնդրանքով Հիսուսին դիմելը նրանց սկզբից անիմաստ էր թվացել. առավել անիմաստ է այժմ, երբ աղջնակն արդեն հրաժեշտ է տվել կյանքին: «Ամեն ինչ վերջացած է, մահը վերջակետ է դրել դստերդ տառապանքներին, արդեն այն աշխարհում է, իր նախնիների մոտ: Հետեւաբար այլեւս կարիք չկա Վարդապետին անհանգստացնելու»:

Հիսուս, որ համաձայնել էր գնալ Հայրոսի տուն՝ աղջկան բժշկելու, այժմ էլ նրան միայնակ չի թողնում իր ողբերգությանը դեմհանդիման, չի թողնում, որ հուսալքությունն ու իրապաշտությունը հաղթեն նրան: Աստծո զորության առջեւ ի՞նչ մեծ տարբերություն՝ հիվանդ է, թե մահացած: Կարեւորը հավատն է, որ չթուլանա: Ազգականները կարող են ասել ի՜նչ ցանկանում են: Հիսուս նրանց չի կշտամբում, փոխարենը քաջալերում է վշտահար հորը՝ մահվան իրականությունից այն կողմ տեսնելու կյանքը: «Մի՛ վախեցիր, Հայրո՛ս, լսեցի, թե քեզ ինչ ասացին, շարունակի՛ր հավատալ, միտքս չեմ փոխել, շարժվի՛ր, գնացի՛նք»:

Երբ տուն են հասնում, բացվում է տխուր մի տեսարան. ամենուրեք արցունք, սգավորների բազմություն, որոնք լաց ու կոծով արտահայտում են իրենց ցավը, վայնասունով ցույց տալիս իրենց վշտի խորությունը: Հիսուս հանդարտ մտնում է ներս եւ պատվիրում դադարեցնել հուսահատ ճիչերը. «Աղջիկը մեռած չէ, այլ ննջում է,- ասում է համոզիչ շեշտով,- եւ եթե ընդամենը

ննջում է, ապա ինչի՞ համար է այս ողբաձայն աղմուկը»: Հիսուս չի բավարարվում հրաշագործելու իր մտադրությամբ, փորձում է վստահություն ներշնչել շրջապատին, ամրապնդել հատկապես Հայրոսի հավատը: Չէ՞ որ Հայրոսի հետ տուն էր եկել այն Հիսուսը, որի հրաշագործությունների մասին պատմում են ամենուր, այն նոր Մարգարեն, որի բժշկությունների մասին խոսում են ամենքը: Բայց հավաքված բազմությունը, որ տեսնում էր իրականությունը՝ փոքրիկ աղջկա անշնչացած մարմինը, անդրդվելի էր իր իրապաշտության մեջ. Հիսուսի խոսքերն անիմաստ են, ծաղրի արժանի: Ի՞նչ է նշանակում՝ «մեռած չէ, այլ ննջում է»:

Սիրելի՛ հավատացյալներ, սուրբգրային ընկալմամբ՝ մահը նինջ է՝ արթնանալու սպասումով: Մեռյալները, հետեւաբար, պառկում են ասես քնի մեջ՝ սպասելով Տիրոջ զարթնեցնող ձայնին: Ահավասիկ, Տեր Հիսուս կանգնած է աղջնակի առջեւ եւ, որպես Աստծո Խոսք, նրան ձայն է տալիս. «Աղջի՛կս, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց»: Ավետարանը վկայում է, որ աղջիկն իսկույն կանգնում է. մանուկը լսում է ձայնը Նրա, ով իր մասին ասում է՝ «Ես եմ կյանքը», եւ պատասխանում է կյանքով:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այսօրվա ավետարանական պատումը վկայությունն է Աստծո անսահման սիրո եւ հավատի հրաշագործության: Հայրոսի հավատը մեզ ուսուցանում է, որ իրապաշտությունն ու իրականությունը տարբեր են. իրապաշտությունը հիմնված է իրականության տեսանելի, շոշափելի կողմի վրա, որը դեռ իրականության ամբողջությունը չէ, եւ որը մեզ շարունակ ներշնչում է վախ, թերահավատություն եւ անհուսություն: **Հավատը տեսանելիից այն կողմ՝ անտեսանելին տեսնելու կարողությունն է:** Հայրոսի շրջապատի մարդիկ ընկալում էին իրականության տեսանելի կողմը, այն է՝ աղջիկը հիվանդ է, ավելին՝ մահամերձ, դեռ ավելին՝ ավանդել է հոգին: Նրանց համար սա էր իրականությունը, ավելին ծաղր էր եւ անհեթեթություն: Մինչդեռ Հայրոսն այս իրականության առջեւ, հավատի զորությամբ, կարողանում է տեսնել անտեսանելին, այն է՝ Աստծո գործուն ներկայությունը եւ դստեր բժշկումն ու վերհառնումը:

Անտեսանելին տեսնելու լավագույն օրինակ է ցույց տալիս Աբրահամը: Տեսանելի իրականություն էր, որ ուներ հայրենի երկիր, ծննդավայր, հայրական օջախ, ունեցվածք, իրավունքներ եւ պարտականություններ, բայց հնազանդվելով Աստծո կոչին՝ թողնում է այն, ինչ տեսանելի, շոշափելի էր, եւ շարժվում է այն ուղղությամբ, որն Աստված դեռ պետք է ցույց տար: Տեսանելի իրականություն էր, որ անզավակ Աբրահամը զառամյալ ծերունի էր, կինն էլ՝ ամուլ, բայց տեսանելի իրականությունից այն կողմ հավատում էր որդի ունենալու աստվածային խոստմանը: Տեսանելի իրականություն էր, որ Աբրահամն արդեն որդի ուներ՝ Իսահակին, որի միջոցով իրականություն պետք է դառնար անթիվ-անհամար սերունդ ունենալու խոստումը, սակայն տեսա-

նելի իրականությունից այն կողմ, այնուամենայնիվ, հավատում է Տիրոջ այս խոստման իրագործմանը՝ Իսահակին տանելով զոհաբերման:

Անտեսանելին տեսնելու ի՜նչ կարողություն, ի՜նչ հավատ ունեին հենց մեր նախնիները, որոնք կանգնած էին ծանր իրադրության առջեւ՝ պետականության կորուստ պատմական հայրենիքում՝ Բագրատունյաց թագավորության անկմամբ, պետականության կորուստ Կիլիկյան ափերում... Սակայն պետականության անկման իրականության առջեւ՝ գրեթե չորսհարյուրամյա հեռավորությունից կարողացան տեսնել հայոց պետության վերհառնումը՝ ձեռնարկելով հայրապետական աթոռի տեղափոխությունը: Ապա ինչպիսին էր Ի. դարասկզբի տեսանելի իրականությունը՝ ցեղասպանված եւ հայրենազրկված մի ողջ ազգ, ցիրուցան եղած մի ժողովուրդ, սով, համաճարակ, մնացորդացի գլխին՝ թշնամու դամոկլյան սուր: Սակայն մահվան ու ավերածության տեսանելի իրականությունից այն կողմ մեր պապերը հավատացին ոչ միայն ազգի հարությանը, այլեւ պետականության վերականգնմանը՝ դուրս գալով Սարդարապատի դաշտ:

Միրելինե՛ր, հավատի արդյունք են նաեւ այսօրվա մեր պետականությունն ու անկախ Հայաստանի գոյությունը, որի տեսանելի իրականությունն այն դժվարություններն են, որոնց առջեւ կանգնած ենք մենք՝ անարդարություն, սոցիալական անհավասարություն, սանձարձակ ազատականություն, հատվածականություն, եւ վերջապես այս ամենը խտացնող հետեւանք՝ արտագաղթ: Տեսանելի իրականությունից անդին հավատո՞ւմ ենք, որ կարող ենք ստեղծել արդար, իրավական եւ հոգեւոր արժեքներով ապրող, միասնական հասարակություն, հայրենի ուժեղ պետություն, թե՞ Հայրոսի ազգականների նման ասում ենք՝ «Բա՛ց թող, արդեն ուշ է»: Հիսուս, ի դեպ, մինչ աղջկան հարություն տալը՝ նրանց դուրս է հանում տանից, : Իսկ ինչպես կարձագանքեր Հիսուս, երբ ասում ենք. «Այս երկրում ապագա չկա», «Ամեն ինչ սուտ է, ոչինչ էլ չի փոխվի», «Մի հեռավոր անկյուն լիներ՝ հանգիստ ապրեի»:

Հայրոսի դստեր իրավիճակը խորհրդանշում է այսօրվա մեր կյանքի իրականությունը՝ հոգեւոր թե նյութական, անհատական թե հանրային մակարդակների վրա: Միայն Տեր Հիսուս եւ Աստծո զորավոր ներկայության հանդեպ հավատը կարող են բժշկել մեր հիվանդությունները եւ նոր կյանք պարգեւել մեր հոգեւոր թմրությանը:

Բայց հասարակությունը կարիքն ունի մեր՝ քրիստոնյաներիս անձնական պատասխանի՝ ուղղված Տիրոջ կենսատու խոսքին՝ «Մի՛ վախեցեք, միայն հավատացե՛ք... Ձե՛զ եմ ասում, վե՛ր կացեք»: